ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի
Ավշար համայնք, գյուղ Ավշար Անդրանիկի 1
Հեռախոս՝ 4-51-79

# Ո Ր Ո Շ Ու Մ

«16 » ապրիլի 2014 թվականի N 08 - Ն

## 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ի ՀՕ 190 - Ն ՕՐԵՆՔՈՎ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 534.7 հա ՀՈՂԵՐԻՑ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2009թ.-ի հոկտեմբերի 6-ի ՀՕ -190-Ն օրենքով Ավշար համայնքին փոխանցված 534.7 հա պետական սեփականություն հանդիսացող հողատարածքի իրավական կարգավիճակի և ներկայումս տիրող իրավիճակի մասին :

Առաջարկեց. ելնելով համայնքի հետագա զարգացման ծրագրերից, հաշվի առնելով հանքարդյունաբերության շահութաբերությունը,

**Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ կետի և հողի հարկի մասին օրենքի 5-րդ հոդվածի պահանջներով, նշված տարածքներում հանքարդյունահանման նպատակով օգտագործվող և նոր օգտագործման տրամադրվող հողատարածքների 1/մեկ/ հա-ի համար վարձավճարի չափ սահմանել հողի կադաստրային արժեքի 20%-ը:**

Թեպետ առաջին հայացքից բարձր է երևում վարձավճարի տոկոսաչափը, բայց հաշվի առնենք, որ տրավերտին քարի արդյունահանողները , ինչպես նաև այդ տարածքում մյուս հանքարդյունահանողները, տարիներ շարունակ օգտագործում են հանքերը, մոռանալով պայմանագիր կնքելը և վարձավճար մուծելը համայնքի բյուջե:

Սակայն բազմաթիվ անգամ զգուշացվել են պայմանագրի կնքման և վարձավճար վճարելու մասին:

Այս ամենը ներկայացնելով Ձեզ՝ հարգելի ավագանու անդամներ, զեկույցիս ավելացնում եմ նաև, հետագայում հանքարդյունահանողների կողմից վարձավճարի վերաբերյալ հիմնավորված գրավոր հիմնավորումները՝ հանքաքարի պաշարների սակավության և անորակ լինելու վերաբերյալ, այդ գրությունը ևս կներկայացվի Ձեր քննարկմանը և Ձեր կողմից կկայցվի որոշում վարձավճարի չափը վերանայելու մասին:

Միաժամանակ, որպես համայնքի ղեկավար, ես ինձ պարտավորված եմ զգում պաշտպանելու ինչպես համայնքի շահերը, այնպես էլ վարձակալների շահերը:

Ավագանու նիստում զեկույցս ավարտելով, Ձեր քննարկմանն եմ թողնում այն ամենը, ինչը ներկայացվեց Ձեզ, որոշում կայացնելու համար:

Ավագանին քննարկեց համայնքի ղեկավարի զեկույցը և հավանություն տվեց զեկուցման բոլոր դրույթներին, որոնք բխում են համայնքի զարգացման ու բնակչության շահերից և կայացրեց որոշում:

**Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ կետի և հողի հարկի մասին օրենքի 5-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.**

08-Ն

1. Ավշար համայնքին 2009թվականի հոկտեմբերի 6-ի ՀՕ-190-Ն, օրենքով փոխանցված տարածքում հանրարդյունահանման համար վարձավճարի չափ սահմանել հողի կադաստրային արժեքի 20%-ի չափով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է հրապարակման պահից:

կողմ /8/ դեմ /0/ ձեռնպահ /0/

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
ԲՈՒՂՈՒՄՅԱՆ ՄԱՅԻՍ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
ՀԱԿՈԲՅԱՆ ՋԱՎԵՆ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՎԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Թ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

*04101116*